336.3
Ի-11
17 FEB 2010

ԽՍՀՄ—Ֆժկ

ՊԵՏԱՇԽԽԱՅԴՐԱՄԱՐԿՂ-
ՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ
ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

«17» ոգոստոսի 1936 թ.
Ինդ. 34—6

ՊԵՏԱՇԽԽԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՆ.

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՅԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐԻ ՎԱՐԻՉՆԵՐԻՆ.

Նախորդ փոխառությունների մասի՝ 5 ռուբլիանոց յեվ 2 ռուբլի 50 կոպեկանոց պարտատոմսեր ունեցող պարտատոմսատերերի հետ հաշվարկումներ կատարելու կարգի մասին փոխանակման ժամանակ.

Առաջներում բաց թողնված պետական ներքին փոխառությունների պարտատոմսերը — յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) հետ փոխանակելու ժամանակ, կարող են պատահել այնպիսի դեպքեր, յերբ փոխանակման համար ներկայացված գումարի չափով հնարավոր չի լինի լրիվ չափով տալ յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) պարտատոմսեր և առանձին պարտատոմսատերերի մոտ կմնան մեկ պարտատոմս 5 ռուբլիանոց, կամ մեկական պարտատոմսեր 5 ռուբլիանոց և 2 ռուբլի 50 կոպեկանոց կամ 1, 2, 3 պարտատոմսեր 2 ռուբլի 50 կոպեկանոց.

Այդ կարող են տեղի ունենալ հետևյալ առանձին դեպքերում։

1) Յերբ պարտատոմսատերը մոտ յեղած նախորդ

25 OCT 2013 27945

փոխառությունների պարտատոմսերի ընդհանուր գումարը կազմում է 5 ռուբլի, 7 ռուբլի 50 կոպեկ, 15 ռուբլի կամ 17 ռուբլի 50 կոպեկ։

2) Յերբ փոխանակման համար ներկայացվում են ցանկացած քանակությամբ պարտատոմսեր, որոնց թվում կան 2 ռուբլի 50 կոպեկանոց, կենտ քանակով պարտատոմսեր.

Առաջին դեպքում չի կարող փոխանակվել 5 ռուբլիանոց մեկ պարտատոմս, կամ 2 ռուբլի 50 կոպեկանոց մեկ պարտատոմս, կամ 2 ռ. 50 կոպ. յերկու պարտատոմս, կամ 5 ռուբլիանոց և 2 ռուբլի 50 կոպեկանոց մեկական պարտատոմս։

Յ ե ր կ ր ո ր դ դ ե պ ք ո ւ մ—փոխանակումից հետո մնում է միայն մեկ պարտատոմս 2 ռուբլի 50 կոպեկանոց։

Բացի վերոհիշյալ դեպքերից, որոնք գործնականում կարող են հազվագյուտ դեպքերում տեղի ունենալ, մյուս դեպքերում նախորդ փոխառությունների պարտատոմսերի փոխանակումը, անկախ նրանց քանակից և գումարից ամբողջությամբ ապահովված է յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) պարտատոմսերի կուպյուրներով։

Յեթե, օրինակի համար, ներկայացվում են փոխանակման համար 95 ռուբլու պարտատոմսեր, որոնց թվում 5 ռուբլիանոց 3 պարտատոմսեր և չորս հատ (զույգ թվի) պարտատոմսեր՝ յուրաքանչյուրը 2 ռուբլի 50 կոպեկանոց պարտատոմսեր, ապա փոխանակման համար կարող են տրվել մեկ պարտատոմս 50 ռուբլիանոց, մեկ պարտատոմս 25 ռուբլիանոց և 2 պարտատոմս 10-ական ռուբլիանոց։ Յեթե փոխանակման համար ներկայացվում է 135 ռուբլու նախորդ փոխառությունների պարտատոմսեր, ապա փոխանակման համար տրվում է մեկ պարտատոմս 100 ռուբլիանոց, մեկ պարտատոմս 25 ռուբլիանոց և մեկ պարտատոմս 10 ռուբլիանոց և այլն։ Պետաշխխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր Վարչությունն առաջարկում է կիրառել նախորդ փոխառությունների 5 ռուբլիանոց և 2 ռուբլի 50 կոպեկանոց պարտատոմսեր ունեցող պարտատոմսատերերի

Ca 36-к 1458 336 Ы-11

հետ հաշվարկումներ կատարելու հետևյալ կարգը՝ այն դեպքում, յերբ նախորդ փոխառությունների փոխանակման համար ներկայացված պարտատոմսերի գումարի չափով չեն կարող տրվել յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) սահմանված արժեքով պարտատոմսեր.

1) Այն պարտատոմսատերերը, որոնց մոտ նախորդ փոխառությունների պարտատոմսերի փոխանակման ժամանակ մնում են մեկ պարտատոմս 5 ռուբլիանոց, կամ 2 ռուբլի 50 կոպեկանոց, կամ յերկու պարտատոմսեր 2 ռուբլի 50 ական կոպեկանոց, կամ մեկական պարտատոմսեր 5 ռուբլիանոց և 2 ռուբլի 50 կոպեկանոց կարող են՝

ա) ստանալ, յեթե նրանք այդ կցանկանան, յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) տաս ռուբլիանոց պարտատոմս լրացուցիչ կերպով վճարելով 2 ռուբլի 50 կոպեկ, 5 ռուբլի, կամ 7 ռուբլի 50 կոպեկ, կամ հանձնել այդ պարտատոմսերը յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) բաժնեգրության ներթական մուծումների հաշվին, այն դեպքում, յերբ փոխանակումը կատարվում է ձեռնարկություններում, հիմնարկներում, գյուղխորհուրդներում և կոլտնտեսություններում.

բ) ստանալ Յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) տաս ռուբլիանոց պարտատոմս լրացուցիչ կերպով մուծելով 2 ռուբլի 50 կոպեկ, 5 ռուբլի կամ 7 ռուբլի 50 կոպեկ, այդ դեպքում, յերբ փոխանակումն անմիջականորեն կատարվում է խնայողական դրամարկղում։

2) Ձեռնարկությունները, հիմնարկները, գյուղխորհուրդները, կոլտնտեսությունները և շրջխնայդրամարկղի փոխանակումը գյուղում կատարող լիազորները պարտավոր են նախորդ փոխառությունների մանր արժեքներով պարտատոմսեր ունեցող պարտատոմսատերերի հետ վերոհիշյալ դեպքերում հաշվարկումները ձևակերպել հետևյալ կերպ.

ա) Այն դեպքում, յերբ մանր արժեքով պարտատոմս հանձնող պարտատոմսատերը ցանկանում է վճարել լրացուցիչ 2 ռուբլի 50 կոպեկ, 5 ռուբլի կամ 7 ռուբլի 50 կոպ. հասցնելով այդպիսին յերկրորդ հնգամյակի փոխառության

(չորրորդ տարվա բաժին) տաս ռուբլիանոց պարտատոմսի արժեքին, պարտատոմսերի փոխանակումը կատարող աշխատակիցը, պարտավոր է ընդունել մանր արժեք—2 ռուբլի 50 կոպեկանոց, 5 ռուբլի կամ 7 ռուբլի 50 կոպեկանոց պարտատոմսը և ստանալ այդ պարտատոմսատիրոջից կանխիկ դրամ—համապատասխան գումարով 7 ռուբլի 50 կոպեկ, 5 ռուբլի, կամ 2 ռուբլի 50 կոպեկ, գրել ցուցակի մեջ ազգանունը և ընդունված պարտատոմսի գումարը, տալ յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) տաս ռուբլիանոց պարտատոմս և վերցնել պարտատոմսատիրոջից ստորագրություն—դրամը վճարելու և տաս ռուբլիանոց պարտատոմսն ստանալու մասին։

Այդ կարգով ստացված դրամը և նախորդ փոխառությունների մանր արժեք պարտատոմսերը ցուցակի հետ միասին, ձեռնարկությունները ու հիմնարկները, ինչպես և փոխանակումը գյուղում կատարող շրջխնայդրամարկղի լիազորները պարտավոր են հանձնել շրջ(քաղ) խնայդրամարկղին փոխանակման համար ընդունված նախորդ փոխառությունների պարտատոմսերի հերթական հանձնումը կատարելիս։

Շրջ(քաղ) խնայդրամարկղը պարտավոր է ձեռակերպել ձեռնարկություններից, հիմնարկներից և փոխանակումը գյուղում կատարող գյուղական լիազորներից դրամի և մանրարժեք պարտատոմսերի ընդունումը, վորպես ձեռնարկությունների, հիմնարկների և լիազորների կողմից յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) պարտատոմսերի վերադարձում, կատարել նախորդ փոխառությունների մանր արժեք ունեցող պարտատոմսերի գնումները և յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) պարտատոմսերի վաճառք այնպիսի գումարի չափով, վորպիսի գումարով փոխանակման ժամանակ տված են պարտատոմսեր լրացուցիչ վճարի հետ միասին։

Այդ կարգով պարտատոմսատերերին տված յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) պարտատոմսերը դուրս են գրվում խնայդրամարկղի կողմից ձեռնարկության, հիմնարկության, ինչպես և փոխանակումը

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐ. ԴԱՐԱՆ
ГСС. Библиотека
ZUUR-Арм.ССР
61141-67

գյուղում կատարող լիազորի անձնական հաշիվներից (յուք № 208 հաշվից № 1 և 2 յենթահաշիվներով), ժուռք են գրվում № 205 հաշիվը (պարտատոմսերի վերադարձում) և միաժամանակ անց են կացվում այդ հաշվի յելքով (վաճառք)։

բ) Յեթե մանրարժեք պարտատոմս ունեցողը ցանկանում է հանձնել իր մանրարժեք պարտատոմսերը, ի հաշիվ յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) բաժնեգրության հերթական մուծման, ապա պարտատոմսերի փոխանակումը կատարող աշխատակիցը պարտավոր է ընդունել այդ պարտատոմսատիրոջից 2 ռուբլի 50 կոպեկ, 5 ռուբլի կամ 7 ռուբլի 50 կոպեկ—մանրարժեք պարտատոմսերը, գրել պարտատոմսատիրոջ ազգանունը և ընդունված պարտատոմսերի գումարն առանձին ցուցակի մեջ և վերցնել ցուցակի վրա պարտատոմսատիրոջ ստորագրությունը իր կողմից մանրարժեք պարտատոմսերի հանձնումը հաստատելու համար։

Ցուցակը, ընդունված մանրարժեք պարտատոմսերի հետ միասին, հանձնվում է ձեռնարկության հաշվապահությանը (գյուղում գյուղխորհրդի քարտուղարին կամ հաշվետարին) այդ պարտատոմսերը իրենց անվանական արժեքով վորպես փոխառության բաժնեգրության մուծում հաշվի առնելու համար։ Մանրարժեք պարտատոմսերի անվանական արժեքը, վորն ընդունված է, համաձայն ցուցակի, վորպես փոխառության բաժնեգրության հերթական մուծում, պիտի գրանցվի բաժնեգիրների հերթական մուծումները հաշվի առնելու համար սահմանված փաստաթղթերի մեջ, ըստ վորում ձեռնարկություններում և հիմնարկներում ձև № 1-ը «փոխառության բաժնեգրության քարտ»-ի կամ ձև № 137 տեղեկագրի մեջ, իսկ գյուղական խորհուրդներում ձև № 52 հաշվարկային անդորրագրերի և նրանց արժատների և ձև № 53 հաշվարկային տեղեկագրերի մեջ

Փոխառության բաժնեգրության հերթական մուծումները խնայդրամարկղը փոխանցելիս, ձեռնարկությունը, հիմնարկությունը և գյուղխորհուրդը պարտավոր են հանձնել խնայդրամարկղին բաժնեգիրներից ստացված մանրար-

ժեք պարտատոմսերը, բաժնեգիրների ցուցակների հետ միասին։

Խնայողական գրամարկղը ձեռնարկություններից, հիմնարկներից և գյուղխորհուրդներից ստացված մանր արժեք պարտատոմսերը ձևակերպում է, վորպես այդ պարտատոմսերի գնում, միաժամանակ փոխանցելով նրանց անվանական արժեքը յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) բաժնեգրության մուծումների հաշվին։

գ) Խնայողական դրամարկղում պարտատոմսերի փոխանակման ժամանակ առանձին բաժնեգիրներից 2 ռուբլի 50 կոպեկանոց, 5 ռուբլիանոց և 7 ռուբլի 50 կոպեկանոց մանրարժեք պարտատոմսերի և դրան համապատասխան 7 ռուբլի 50 կոպեկ, 5 ռուբլի և 2 ռուբլի 50 կոպեկ կանխիկ դրամի ընդունումը ձևակերպվում է վորպես այդ պարտատոմսերի գնում, փոխանցելով միաժամանակ նրանց անվանական արժեքը և ընդունված կանխիկ դրամը վորպես յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) տասս ռուբլիանոց վաճառված պարտատոմսերի արժեքի վճարում։

Այս կարգադրությունն ուղարկեցեք բոլոր ՀԲՀ(քաղ խնայդրամարկղներին և նրանց բաժանմունքներին, ձեռնարկությունների և հիմնարկների հաշվապահներին, գյուղխորհուրդներին և ոժանդակող հանձնաժողովներին։

Պետախնայդրամարկղների յեվ պետվարկի
գլխավոր վարչության պետ ՈՉԵՐՅԱՆՍԿԻ

ՊԵՏ ԳՈՍ. ՄՐԱԳԻՐ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. ԱՄ. Մ. ՍՈՒՄԱՍՅԱՆ
Ա. ՍՈՒՄԱՍԻԿՈՅԱՆ ԱՆՎԱՆ

Գյուղհրատ տպարան Ռեկլամ-Հրատ. Բյուրո
Քաղլիտ պետ № 1113 պատվեր № 663—182 տիրաժ 800

Ազգային գրադարան
NL0220028

654

27945

336.3
ku-11